Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 10-ը հոկտեմբերի 2019 թվական քաղաք Գյումրի

2019 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարներից 41-ը, Արևշատ համայնքի ղեկավարը բացակայում էր հարգելի պատճառով:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մինչև օրակարգային հարցերին անցնելը մարզպետը տեղեկացրեց, որ 2019 թվականի սեպտեմբերի 29-ին կայացել են Գետափ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություններ, որի արդյունքներով համայնքի ղեկավար է ընտրվել Շիրակ Ռուբենի Խաչատրյանը:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

1. **Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի 9 ամիսների կատարման մասին**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2. **Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը Շիրակի մարզում**

   Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյան

3. **Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության, նրանց կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրության**

համապատասխանության վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքների և ընթացիկ այլ հարցերի վերաբերյալ

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյան

4. **Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Վահան Մարտիրոսյան

5. ***Հայտարարություններ***

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի 9 ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

(Զեկուցագիրը կցվում է)

Անդրադառնալով համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ինն ամիսների ցուցանիշներին, մարզպետը մտահոգիչ համարեց մի շարք համայնքներում հողի վարձավճարների հավաքագրման ցածր ցուցանիշները և նշեց, որ համայնքների ղեկավարներն այս առումով անելիք ունեն: Անհրաժեշտ է տարանջատել պարտաճանաչ ու անբարեխիղճ վարձակալներին և չշարունակել պայմանագրեր կնքել անբարեխիղճ վարձակալների հետ:

Եվս մեկ անգամ հորդորեց սեփական եկամուտների ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին շարունակական աշխատանք տանել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 2. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը Շիրակի մարզում

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

(Զեկուցագիրը կցվում է)

Զեկուցողը տեղեկացրեց նաև, որ մարզպետի նախաձեռնությամբ համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, որպեսզի 2019 թվականին մարզում աշնանացան ցորենի ծրագիր իրականացվի, սակայն ժամկետի սղության պատճառով կառավարությունը նախատեսել է 2020 թվականի գարնանացան ցորենի ծրագիր իրականացնել: Համայնքներից ստացված հայտերը կամփոփվեն, կուղարկվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Սարատակ համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց մարզում անասնաբուժության բնագավառում առկա թերությունների մասին, որին ի պատասխան մարզպետը նշեց, որ հայտարարությունը պետք է հիմնավորել, որի համար հանձնարարեց զեկուցողին հաջորդ շաբաթվա ընթացքում հրավիրել խորհրդակցություն, բոլոր շահագրգիռ անձանց ներկայությամբ և պարզաբանել համայնքի ղեկավարի մտահոգությունները:

ԼՍԵՑԻՆ 3. Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության, նրանց կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքների և ընթացիկ այլ հարցերի վերաբերյալ

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյան

(Զեկուցագիրը կցվում է)

Մարզպետը նշեց, որ մարզում համայնքների ավագանիների կողմից ընդունված յուրաքանչյուր երկու որոշումներից մեկը ոչ իրավաչափ է, առաջարկեց համայնքների ղեկավարներին ընդունվող իրավական ակտերի որակը բարելավել: Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչությունը ամենօրյա խորհրդատվություն է ներկայացնում համայնքապետարաններին, ուստի որոշումներ ընդունելուց առաջ անհրաժեշտ է խորհրդակցել և ուսումնասիրել ոլորտային դաշտը: Հավելեց նաև, որ երբ մարզում կլինեն ուժեղ, կայացած համայնքներ, այդ պարագայում մարզպետարանին ավելի քիչ անելիք կմնա:

ԼՍԵՑԻՆ 4. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

(Զեկուցագիրը կցվում է)

Հայտարարությամբ հանդես եկավ մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանը: Վերջինս տեղեկացրեց, որ բազմաթիվ բողոքներ են ստացվել այն շինարարական կազմակերպություններից, որոնք մասնակցում են մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման աշխատանքներին, քանի որ մինչ օրս ֆինանսավորում չի իրականացվել, որը լուրջ վնաս է հասցնում այդ կազմակերպություններին:

Մարզպետը նշեց, որ ֆինանսավորումը կատարվում է ավարտական ակտերի հիման վրա, կառավարությունը որոշում կկայացնի և կազմակերպությունները կֆինանսավորվեն:

Կարևորելով սուբվենցիոն ծրագրերի իրականացումը՝ մարզպետը ողջունեց մարզի համայնքների ղեկավաներին ծրագրերին ակտիվ մասնակցելու համար և հորդորեց հաջորդ տարվա բյուջեն պլանավորելիս հաշվի առնել դրանց իրականացման անհրաժեշտությունը: Նշեց, որ հաջորդ տարի ծրագրերի համար սահմանափակումներ չեն լինի և ինչքան շատ մարզից սուբվենցիոն հայտեր ներկայացվեն, այնքան շատ համայնքների խնդիրներ կլուծվեն:

Մարզպետն արձանագրեց, որ սուբվենցիոն ծրագրերի իրականացումը համայնք-պետություն համագործակցության հիանալի օրինակ է:

Հայտարարության համար մարզպետը ձայն տվեց «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի ներկայացուցչին:

Վերջինս տեղեկացրեց, որ «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաջարկվում է պաշտոնական տեղեկագրերի բաժանորդագրություն: Պաշտոնական տեղեկագրերը իրավական դաշտում միակ պաշտոնական սկզբնաղբյուրն են: Ակտիվ համագործակցության դեպքում համայնքներին անվճար կտրվեն ընկերության կողմից հրատարակվող զանազան օրենսդրական փաթեթներ:

Եվս մեկ հայտարարությամբ հանդես եկավ քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանը՝ «Մանթաշի ջրամբար»-ից սնվող համայնքներին մաքուր խմելու ջուր մատակարարելու խնդրի վերաբերյալ: Ներկայումս ջրի որակը շատ ցածր է և «Վեոլիա ջուր» ընկերությունը որոշում է կայացրել աղբյուրների վրա կապտաժներ կառուցել: Սակայն Փոքր Մանթաշ համայնքի ավագանու կողմից համաձայնություն չի տրվել կապտաժների կառուցմանը, որի պատճառով «Վեոլիա ջուր» ընկերությունը կարող է հրաժարվել ջրամատակարարում իրականացնել և մի շարք համայնքների դուրս բերել իր սպասարկման ոլորտից: Խնդիրը շատ լուրջ է, այն կարող է անդառնալի հետևանքներ թողնել, ուստի համայնքների ղեկավարներին առաջարկեց քննարկել և սեղմ ժամկետում հայտնել իրենց դիրքորոշումը:

Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Տաթևիկ Առաքելյանը

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2019 թվականի ինն ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2019թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 85.6%-ով (տարեկան պլանի նկատմամբ 60.6%), նախատեսված 1,895,768.3 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,622,708.2 հազ. դրամ:

Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 273,060.0 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2019թ. բյուջեների ինն ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2019թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի հարկ	252,155.6	203,655.0	- 48,500.6	80.8
Գույքահարկ	713,681.4	587,324.2	- 126,357.2	82.3
Պետական տուրք	33,660.0	45,693.1	12,033.1	135.7
Տեղական տուրք	98,890.3	89,310.7	- 9,579.5	90.3
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	265,825.7	206,250.7	- 59,575.0	77.6
ա/ հողի վարձավճար	220,905.1	166,547.6	- 54,357.5	75.4
բ/ գույքի վարձավճար	44,920.6	39,703.0	- 5,217.6	88.4
Այլ եկամուտներ	531,555.3	490,474.5	- 41,080.8	92.3
Ընդամենը սեփական եկամուտներ	1,895,768.3	1,622,708.2	- 273,060.0	85.6

2019թ. ինն ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2018թ. համեմատությամբ կազմում է 11.9% կամ ավել է հավաքագրվել 172,934.7 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

Հ/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2019թ. 9 ամիսների նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1.	**Ամասիա այդ թվում՝**	**70,362.0**	**60,775.2**	**- 9,586.8**	**86.4**
1.1	Ամասիա	37,352.2	33,057.0	- 4,295.2	88.5
1.2	Արփի	33,009.8	27,718.2	- 5,291.6	84.0
2.	**Արթիկ**	**269,677.4**	**226,904.1**	**- 42,773.3**	**84.1**
3.	**Աշոցք այդ թվում՝**	**79,746.6**	**62,611.0**	**- 17,135.6**	**78.5**
3.1	Աշոցք	49,897.6	41,351.5	- 8,546.1	82.9
3.2	Սարապատ	29,849.0	21,259.5	- 8,589.5	71.2
4.	**Ախուրյան այդ թվում՝**	**304,936.7**	**233,457.7**	**- 71,479.7**	**76.6**
4.1	Ախուրյան	124,651.4	96,963.1	- 27,688.3	77.8
4.2	Մարմաշեն	75,032.7	58,027.7	- 17,005.0	77.3
5.	**Անի**	**130,541.3**	**86,045.6**	**- 44,495.7**	**65.9**

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2019թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Անիի տարածաշրջանում՝ 65.9%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 64.1%, կամ աճի տոկոսը կազմում է 1.8, գումարային աճը կազմել է 12,130.1 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2019թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 91.6%, **Արթիկ** քաղաքը՝ 88.5%:

Մարզի թվով 29 համայնքներ չեն ապահովել 2019թ. ինն ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 85.6%-ը, այդ թվում թվով 1 համայնք չի ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2019 թվականին վեց ամիսներին նախատեսված 3,619,874.8 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը Շիրակի մարզում

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

2019թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		
		2018թ.	2019թ.	2019թ. 2018թ-ի նկատմամբ +/-
1	Հացահատիկ	35613	33803	-1810
	Այդ թվում՝ *աշնանացան*	18458	15865	-2593
	գարնանացան	17018	17821	+803
	հատիկ	145	117	-28
2	Կարտոֆիլ	3221	3173	-48
3	Բանջարեղեն	1451	1373	-78
4	Կերային մշակաբույսեր	11686	10902	-784
5	Տեխնիկական մշակաբույսեր	105	72	-33
Ընդամենը		**87705**	**81753**	**-5952**

2019թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2018թ. համեմատ պակասել է **5952** հա-ով:

Համախառն բերք՝ 2018-2019.թթ

h/h	Մշակաբույսի անվանումը	Համախառն բերք /տ/			
		2018թ.	2019թ. /կանխատեսվող/		Աճ/նվազում (+/-)
1.	Հացահատիկ	108571	57500	Միջ/17g/	-51106
2.	Կարտոֆիլ	69622	63500	Միջ/200g/	-6122
3.	Բանջարեղեն	31429	30210	Միջ/220g/	-1223

Աշնանացան

2020 թվականին ցանվել է շուրջ 10610 հա աշնանացան հացահատիկային մշակաբույսեր, աշխատանքները դեռ չեն ավարտվել և ընթացքի մեջ են:

Բերքահավաք

2019 թվականին ցանվել է 33803 հա հացահատիկ, որի բերքահավաքն ավարտվել է, միջին բերքատվությունը կազմել է 17 ցենտներ՝ նախորդ տարվա 30,2-ի դիմաց:

Կարտոֆիլի և բանջարեղենի բերքահավաքը դեռ չի ավարտվել և միջին բերքատվությունը կազմում է 200-220 ցենտներ՝ նախորդ տարվա 250-280-ի դիմաց:

Բնական աղետներից կրած վնասներ

Կարկտահարություն

2019 թվականի կարկտահարության հետևանքով վնաս են կրել մարզի 54 բնակավարերի գյուղացիական տնտեսություններ, ընդհանուր 9553,799 հա, որի վնասի չափերը կազմում են մոտ 4,5 միլիարդ դրամ:

2019 թվականի հունիսի 27-ին կարկտահարությունից առավել տուժած մարզի թվով վեց՝ Շիրակ, Հովիտ, Կամո, Բասեն, Ջրառատ, Կառնուտ բնակավայրերին «Հայկական Կարմիր Խաչ» ընկերության կողմից տրամադրվել է մարդասիրական օգնություն դրամական աջակցության տեսքով **/925 ընտանիք, 150 040 450 ՀՀ դրամ/:**

Ցրտահարություն

2019 թվականին ցրտահարության հետևանքով վնաս են կրել Աշոցք համայնքի գյուղացիական տնտեսություններ՝ ընդհանուր 24,4 հա:

2019 թվականին բնական աղետներից գյուղատնտեսության ոլորտին հասցված վնասը կազմում է շուրջ 4,55 միլիարդ դրամ:

Սուբվենցիոն ծրագրեր

2019 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Մարմաշեն համայնքը ձեռք է բերել թվով 5 հակակարկտային կայանքներ: Հակակարկտային կայանքներ ձեռք բերելու հայտեր են ներկայացրել Անի և Ղարիբջանյան համայնքները:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանկներում իրականացվում են նաև Գետք, Երազգավորս և Լուսակերտ համայնքների ոռոգման ներքին համակարգերի արդիականացման աշխատանքներ: Գետք համայնքում աշխատանքները ընթացքի մեջ են, իսկ Երազգավորս և Լուսակերտ համայնքներում դեռև չեն մեկնարկել:

Լիզինգի ծրագիր

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզը ձեռք է բերել 26 միավոր նոր գյուղտեխնիկա և գյուղգործիքներ:

Ոռոգում

Ջրամբարների լցվածությունը 11.07.2019թ. դրությամբ՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ^3/	Լցվածությունը առ 10.10.2018թ. /մլն մ^3/	Լցվածությունը առ 10.10.2019թ. /մլն մ^3/	Աճ/նվազում +/- /մլն մ^3/
1	**Ախուրյան**	525.0	38	124.5	**+86.5**
2	**Արփի լիճ**	105.0	35	19.7	**-15.3**
3	**Կառնուտ**	22.60	8.43	6.44	**-1.99**
4	**Սառնաղբյուր**	4.80	0.33	0.44	**+0.11**
5	**Վարդաքար**	5.0	0.63	0.46	**-0.17**
6	**Թավշուտ**	6.0	2.66	0.25	**-2.41**
7	**Մանթաշ**	8.20	2.6	2.7	**+0.1**
8	**Ջաջուռ**	0.28	0.22	0.21	**-0.01**
Ընդամենը		**151.88**	**49.87**	**30.2**	**-19.67**

ՀՀ Շիրակի մարզում ոռոգման նպատակով օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2019թ. հոկտեմբերի դրությամբ (ըստ <<Շիրակ>> ՋՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Չափի միավորը
1	**Ջրառ**	33.4	մլն. մ^3
2	**Ջրտուք**	9.6	մլն. մ^3
3	**Հասույթ**	105.5	մլն. դրամ
4	**Գանձում**	76.2	մլն. դրամ
5	**Գանձման տոկոս**	72	%

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության, նրանց կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքների և ընթացիկ այլ հարցերի վերաբերյալ

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյան

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան, 2019 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում նախատեսված մարզի թվով 14 համայնքներում (Գեղանիստ, Հայկասար, Վարդաքար, Արթիկ, Արփի, Սարապատ, Լուսակերտ, Գետք, Բենիամին, Սպանդարյան, Փոքր Մանթաշ, Փանիկ, Ամասիա, Սարատակ) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն:

Մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերն իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացրել են հաստատված հարցաշարերին համապատասխան: Մասնավորապես, ուսումնասիրվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման օրինականությունն ու արդյունավետությունը առողջապահության, արտակարգ իրավիճակների, անասնաբուժության, բնության և շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական պաշտպանության, քաղաքաշինության, մշակույթի, կրթության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առևտրի և ծառայությունների, հողօգտագործման, ընդերքօգտագործման, ոստիկանության և այլ բնագավառներում:

Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություն է կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերով:

Համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին համապատասխան գրավոր առաջարկություններ են արվել՝ համայնքների ավագանիների նիստերում քննարկել և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

Հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ, իսկ հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց

գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումները վերացնելու ժամանակացույցեր, համաձայն ներկայացված տեղեկատվության խախտումները սահմանված ժամկետներում ամբողջությամբ վերացվել են:

Կատարված աշխատանքների ընթացքի մասին համայնքների ղեկավարների կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են համապատասխան տեղեկություններ, որոնք ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի 9 ամիսների ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարան ստացվել են մարզի թվով 42 համայնքների ավագանիների կողմից ընդունված 1098 որոշումներ, որոնց համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը ուսումնասիրվել է օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան: Համայնքների ավագանիների կողմից ընդունված թվով 1098 որոշումներից 517-ը կամ 47.1 %-ը համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը, իսկ թվով 581-ի կամ 52.9 % ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են համապատասխան առարկություններ և առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ, օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը և արդյունքների մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են տեղեկատվություններ: Մարզպետարանի դիրքորոշման հետ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից չհամաձայնվելու դեպքեր չեն եղել:

Ձեռնարկված միջոցների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, որոշակիորեն բարելավվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը:

Եթե նախորդ տարի նույն ժամանակահատվածում ոչ իրավաչափ որոշումները կազմել են 63,1 %, ապա այս տարվա անցած ինը ամիսների ընթացքում ոչ իրավաչափ որոշումների թիվը նվազել է մինչև 52.9 %:/բարելավվել է մոտ 11 %:

Սակայն, վերը նշված ցուցանիշը հաշվի առնելով հանդերձ, ընդունված իրավական ակտերում դեռևս առկա են նմանօրինակ և կրկնվող մի շարք թերությունները, օրինակ.

- ✓ Շատ դեպքերում հղումները կատարվում են թերի, ոչ լիարժեք, մեծ թիվ են կազմում օրենսդրական տեխնիկայի կանոններին չհամապատասխանող որոշումները: Մի շարք դեպքեր են արձանագրվել նաև, երբ հղումները կատարվել են ուժը կորցրած իրավական ակտերին: /«Տեղական ինքնակառավարման մասին» «Նորմատիվ իրավական ակտերի մասին» «Տեղական տուքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներ/

✓ Առանձին դեպքերում համայնքի սեփականություն հանդիսացող հողերը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ որոշումներ են ընդունվում առանց հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու, չեն նշվում նաև հողերի որակական հատկանիշները (հողի կարգ, ջրովի-անջրդի):

✓ Որոշումներով համայնքի բյուջեում կատարվում են փոփոխություններ, սակայն խախտվում է բյուջեի հավասարակշռությունը, շատ դեպքերում էլ չի նշվում փոփոխության կատարման պատճառները:

✓ Դեռևս արձանագրվում են դեպքեր, երբ որոշումները մարզպետարան են առաքվում օրենքով սահմանված ժամկետի խախտումով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզի մի շարք համայնքապետարաններում ոչ բավարար հիմքերի վրա են գտնվում աշխատանքային ու կատարողական կարգապահության հարցերը: Առանձին համայնքների կողմից երբեմն պահանջված տեղեկատվությունը, գրությունները, իրավական ակտերն ու այլ փաստաթղթեր մարզպետարան են առաքվում սահմանված ժամկետի խախտումներով, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում որոշակի հարցերի լուծման գործընթացներում:

Ավելին, մարզի առանձին համայնքապետարաններում ու խոշորացված համայնքների վարչական նստավայրերում արձանագրվել են աշխատանքային ռեժիմի խախտման դեպքեր: Համայնքապետարանների առանձին աշխատակիցներ երբեմն աշխատանքի չեն ներկայանում, կամ աշխատանքից բացակայում են անհարգելի պատճառներով, իսկ առանձին դեպքերում էլ աշխատանքային ժամերին համայնքապետարանների շենքերի դռները գտնվել են փակ վիճակում:

Այս և այլ կարգի թերություններն ու խախտումները համայնքների ու բնակավայրերի բնակիչների օրինական դժգոհությունն են առաջացրել:

ՀՀ կառավարության 2005 նոյեմբերի 24-ի N 2138-Ն որոշման 1-ին կետով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատաժամանակը սահմանված է 9.00-18-00-ն, աշխատողների հանգստանալու և սնվելու համար ընդմիջման ժամը՝ 13^{00} -14^{00}-ն:

Համայնքապետարաններում աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ պետք է վարվի աշխատակազմի աշխատողների աշխատանքի հաճախումների հաշվառման մատյան (տաբել) և յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը աշխատողների անմիջական ղեկավարը աշխատակազմի քարտուղարին պետք է գրավոր փաստաթուղթ ներկայացնի նախորդ ամսվա ընթացքում իրեն ենթակա աշխատողների կողմից աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի պահանջների խախտման, այդ թվում նաև՝ հարգելի և անհարգելի բացակայությունների դեպքերի վերաբերյալ:

Առաջարկում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ աշխատակազմի աշխատանքները ՀՀ օրենսդրությանը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ, աշխատանքային ու կատարողական կարգապահության կանոնների խախտման յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման առարկա և միջոցներ ձեռնարկել դրանք հետայսու բացառելու ուղղությամբ:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու համար ՀՀ Շիրակի մարզի **25** համայնքների հետ համատեղ կազմված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված **49** ծրագրերի ամբողջական փաթեթները ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ամբողջությամբ հաստատվել են:

2019 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ **49** սուբվենցիայի ծրագրերի կատարման ընթացքն ըստ ոլորտների ունի հետևյալ տեսքը.

- Բնակավայրի փողոցների կառուցում, նորոգում և ասֆալտապատում՝ **10** ծրագրերից **5-ն** արդեն ավարտվել են, **4-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ **1 ծրագիր** գտնվում է կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքման գործընթացում:
- Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում, նորոգում՝ **2 ծրագրերի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են**:**
- Ոռոգման համակարգի կառուցում, նորոգում՝ **3** ծրագրերից **2-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, **1 ծրագրի** իրականացման համար հայտարարվել է մրցույթ:
- Փողոցային լուսավորության համակարգի կառուցում, նորոգում՝ **5** ծրագրերից **3-ն** արդեն ավարտվել են, **1-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ **1 ծրագիր** գտնվում է կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքման գործընթացում:
- Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ **7** ծրագրերից **1-ն** արդեն ավարտվել է, **4-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, **2 ծրագրի** իրականացման համար հայտարարվել է մրցույթ:
- Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում և նորոգում՝ **5 ծրագրերի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են**:**
- Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում, վերանորոգում՝ **6** ծրագրերից **1-ն** արդեն ավարտվել է, **4-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ **1 ծրագրի** իրականացման համար հայտարարվել է մրցույթ:
- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ **2 ծրագրերի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են**:**
- Մեքենասարքավորումների ձեռքբերում՝ **9** ծրագրերից **5-ն** արդեն ավարտվել են, **1 ծրագիր** դեռևս ընթացքի մեջ է**,** իսկ **3 ծրագրի** իրականացման համար հայտարարվել է մրցույթ:

Արդյունքում, **49** ծրագրերից **15-ն** արդեն ավարտվել են, **24-ի** շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, **10** ծրագրեր գտնվում են աշխատանքների իրականացման մրցույթի հայտարարման կամ պայմանագրի կնքման փուլում:

39 սուբվենցիայի ծրագրերի համար հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը՝ **1144.5 մլն. դրամ** ընդհանուր արժեքով, որից ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափը կազմում է **607.6 մլն դրամ**, իսկ համայնքների կողմից կատարված համաֆինանսավորման չափը կազմում է **536.9 մլն.դրամ**:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ուղարկված հանձնարարականով 8 սուբվենցիայի ծրագրեր դասակարգվել են որպես դանդաղ ընթացք ունեցող ծրագրեր:

Դրանք են՝

- **Աշոցք համայնքի** «Մշակույթի տան տանիքի հիմնանորոգում»,
- **Նոր Կյանք համայնքի** «Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում և գյուղամիջյան փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում»,
- **Գետք համայնքի** «Համայնքի արևային էլեկտրակայանի և արտաքին լուսավորության համակարգի վերանորոգում»,
- **Ամասիա համայնքի** «Խոշորացված համայնքի յոթ բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանների կառուցում»,
- **Մարմաշեն համայնքի** «Մայիսյան բնակավայրում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում»,
- **Մեղրաշեն համայնքի** «Հանդիսությունների սրահի կառուցում»,
- **Լուսակերտ համայնքի** «Լուսակերտ համայնքի 1,2 կմ երկարությամբ ոռոգման ինքնահոս փակ համակարգի պլաստիկ խողովակաշարով կառուցում»,
- **Անի համայնքի** «Համայնքի սահմանամերձ և լեռնային բնակավայրերի գիշերային լուսավորման ցանցի անցկացում» ծրագրերը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկ այլ հանձնարարականով պահանջվում է խիստ հսկողություն իրականացնել թվարկված **դանդաղ ընթացք ունեցող սուբվենցիայի ծրագրերով** նախատեսված աշխատանքները մինչև տարվա վերջ ավարտելու նկատմամբ: